քան և թիւրքաց հաւատարմատարների բացակայութիւնը դեսպանների խորհուրդներից։

Որովհետև Ֆրանսիական դեսպանը հեռացաւ Կ. Պօլսից առանց սուլթանի հետ տեսնուելու, այդ պատճառով եզրակացնում են, որ դեսպանը անբաւական է Բ. Դռնից։ Տիսօ յայտնեց Բ. Դրանը, որ նա գնում է և պատրաստ է տեսնուել սուլթանի հետ, մանաւանդ որ նա մի քանի հաղորդութիւններ պէտք է անէ։ Մի և նոյն ժամանակ նա նշանակեց իր գնալու օրը։ Նրան պատասխանեցին, որ սուլթանը տկար է։ Դեսպանը չը յետաձգեց իր գնալու օրը և, ինչպէս հաւատացնում են, չը յանձնեց սուլթանին Գրեվիի նամակը, որով նա շնորհակալութիւն էր յայտնում ստացած թիւրքաց շքանշանի համար։ Տունիսի անցքերից յետոյ Թիւրքիայի և Ֆրանսիայի յարաբերութիւնները այնքան նշանաւոր են դարձել, որ ամբողջ Եւրոպան նրանց վրա ուշադրութիւն է դարձրել։

Ռուսաց քաղաքականութիւնը, որ քնած էր երևում, սկսել է նորից ցոյցեր անել։ Ռուսաց դեսպանը բարձրացրեց չերնոգորիական սահմանների հարցը և միւս դեսպանները նրա հետ միացան։ Վերջապէս հայոց պատրիարքը յայտնել է իր բազմաթիւ բարեկամներին, որ, ինչպէս նա տեղեկութիւն է ստացել հաստատ աղբիւրներից, Ռուսաստանը ձեռնամուխ կը լինի հայկական հարցին և կը համոզէ միւս պետութիւններին այդ հարցը անմիջապէս լուծել։

ՆԱՄԱԿ ԹԻՐՔԻԱՅԻՑ

—

Վան, 3 յունիս 1881

Ներկայ տարւոյ փետրվար 15 թիւ կրող «Մեղուի» մէջ կարդացի մի յօդուած, որով «Մեղուի» պ. խմբագիր դէմ խօսել կարծեր է մեր յօդուածին, որ տպուած էր «Մշակի» 23-րդ թւում։ Ցաւալի է ըսել թէ «Մեղուի» պ. խմբագիր ուրիշներու սխալներ բռնելու ելած միջոցին իր սխալներ կը բռնուին. ըստ «Մեղուի» որպէս թէ Վանում 8,000 տուն բնակիչ կայ եղեր, որից 5,000 զուտ հայ է, թերևս ճիշդ է որ 8,000 տուն բնակիչ կայ Վանում, բայց Աւանց, Շահպաղի, Շամիրամ, Սխկայ, Զրուանդանց, Գուրուպաշ, Լեզկ, Շուշանց և այլն գիւղերն ևս միասին հաշւելով է որ Վանում կունենամք 8,000 տուն բնակիչ։ Վերոյիշեալ գիւղերն քաղաքէս $\frac{1}{2}$—$1\frac{1}{2}$ ժամ հեռաւորութիւն ունենալուն արուարձան կը համարուին Վան քաղաքին, և կառավարութիւն միշտ յիշեալ գիւղերն այնպէս կըմբռնէ։ Մինչդեռ մեր ցոյց տուած 2,886 տուն միմիայն Վանի հայ բնակչաց տանց գումարն է, ի բաց առեալ թրքաց տներն և յիշեալ գիւղերն։ Այսպէս ահա «Մեղուի» պ. խմբագիր քնոյ մէջ երազելով որ Վանի մէջ 2,886 տուն բնակիչ չը կայ, այլ 8,000 տուն, հետևեալ առաւօտ արթննալուն պէս ելեր մեր յօդուածին դէմ է գրեր, և զայն «Մշակի» խմբագրատան մէջ յարմարցուած մի բան կը համարի։ Այդպիսի բաներ անել «Մեղուի» մասնագիտութիւնն է և «Մշակի» պարոն խմբագիրն այս մասնագիտութիւն չունի։ Իսկ գալով այն կէտին, զոր «Մեղուն» կը գրէ թէ Վանեցու ակնարկած յօդուած «Մեղուի» 67-րդ թւում չէ, այդ բանը չարդարացներ դձեզ թրքամոլ լինելուց. ուրիշ փաստեր գտնելու ետևէ եղիք. 67-րդ թւում եղած է թէ 76-րդ թւում, խնդիր մի և նոյն է, յանցանք ձերն է, որ իմ ձեռքս հասած 76-րդ թիւ կրող «Մեղուն» այնչափ անգոյն էր, որ դժուար էր գիտնալ թէ 67 է լրագրին թիւ թէ 76։

Իսկ իմ անձին ձեր ժայթքած երգիծանաց և անպատիւ խօսքերուն ոչինչ ասելիք չունիմ, պ. Սիմիոնեանց, վի կօշիկէն վեր ելլող, խոշորացոյցով Թիֆլիսէն Վան դիտող «Մեղուի» պ. խմբագրի անկրթութիւն կը յայտնեն այդ խօսքերը, և ես կը ներեմ յիշեցնելով նմա թէ խնդրելով, այլ ոչ հրաման տալով։

«Մեղուն» կը գրէ թէ «պ. Վանեցին իւր բնաբան «ականջէն հանել աչք գնել» առածն առնելով, իւր նամակի նիւթ չինում է «Մեղուն», ծամծմում է, քաշքշում է նորա մի առաջնորդող յօդուածի մի կտորն ամբողջութիւն առանց հանդէս բերելու». շատ լաւ, եթէ «Մեղուն» կամենում է ասկից վերջ իր ամբողջ յօդուածը կառնենք կը քաշքշենք։

«Մեղուն» մի ճշմարտութիւն յերևան հանած կը լինէր, եթէ ասէր Վանի նահանգի բնակիչները պակաս ցոյց տրուած են. զի գտնուած են թէ քաղաքի և թէ գիւղերի մէջ այնպիսիներ որք պահած են իրենց որդիքներ և օտար երկրում ունեցած պանդուխտներ, կարծելով թէ վտանգ մը կայ այս վիճակագրութիւնի ծայրը։

Իսկ տների թիւը որ պահել չէ կարելի, այնչափ ճիշդ է, որչափ ճիշդ է «Մեղուի» սխալած լինելը։

Վանեցի

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նորերումս Կ. Պօլսում կատարվեցաւ Սուլթանի քոյրերից մէկի հարսանիքը։ Զարմանալին այն է, որ բարձր հասարակութեան պատկանող թիւրքաց կանայք երբէք հարսանիքը չեն այցելում, ամօթութիւն համարելով այդ վարմունքը։ այդ պատճառով նրանցից ոչ մէկը ներկայ չէր հարսանիքին։ Հարսանիքին ներկայ գտնվող մէկ անգլիուհու նկարագրութեամբ, նորահարսի բնակարանը շատ պարզ և մինչև անգամ աղքատ է, իսկ բազմաթիւ ծառաները շատ աղքատ և վատ են հագնված։ Նորափեսան, Մեհեմէդ-բէյ, 24 տարեկան արևելեան ճաշակով գեղեցիկ մի երիտասարդ է, որին ինքն իշխանուհին ընտրեց իր համար ամուսին։ Օսմանների տանը պատկանող իշխանուհիները իրանց ամուսիններին ընտրելու արտօնութիւնն ունեն, և եթէ նրանց ընտրութիւնը մէկ ամուսնացած մարդու վրա ընկնի, այն ժամանակ այդ մարդը պարտաւոր է իր կնոջից բաժանվել և պսակվել իշխանուհու հետ։ Մէհէմէդ բէյ մէկ անսովոր բաղդի հանդիպեց. աղքատ և անյայտ ադիւտանտը յանկարծ իր տիրոջ փեսան դարձաւ։ Անցնելով իր կնոջ ննջարանը տանող բազմաթիւ սենեակներով, ուր պէտք է պսակի հանդէսը կատարվէր, նա մանր արծաթեայ փողեր էր ցցում երկու կողմից իրան շրջապատող ծառաներին։ Հանդէսին ներկայ էր միայն նորահարսի մայրը. բոլոր ծիսակատարութիւնը բաղկացած է նրանում, որ իմամը նորապսակներին թևով կապում է և յայտարարում է նրանց ամուսին այր և կին։ Յետոյ նորապսակ երիտասարդը յետին դռներից դուրս գնաց և անյայտացաւ՝ ենթարկվելու հին թիւրքական սովորութեանը՝ ծառաների մտրակահարութեանը, որի համար ծառաները առատութեամբ ընծայ են ստանում։ Անգլիուհուն այն ժամանակ թոյլ տուեցին նորահարսին շնորհաւորել։ Իշխանուհին 22 տարեկան է. նա շատ գեղեցիկ և համակրական է։ Նրա աթոռի ետևից կանգնած էր մէկ պառաւ հասու կին, որը անդադար ուղղում էր նորահարսի քղանցքը (շլէյֆ)։ Յայտնվեցաւ, որ պառաւը իշխանուհու մայրն էր, բայց, որպէս աղախին ծնված, նա իր աղջկայ ներկայութեամբ իրաւունք չունէր նստել։ Բայց նա այդ բանից բոլորովին չէր վիրաւորվում և ուրախութիւնից փայլում էր, տեսնելով իշխանուհու ուրախութիւնը։

⁂

Ֆրանկֆուրտ Մայնի վրա եղած գինահանդիսին լուր տարածվեցաւ, որ Սաքսօնիայի թագաւորը, թագուհին և այլ բազմաթիւ բարձրաստիճան անձինք կայցելեն գինահանդէսը։ Իսկոյն բոլորը ֆրակներ հագան, շինութիւնը զարդարեցին ծաղիկներով և դրօշակներով, մուտքի մօտ մէկ չվէյցար կանգնեցրին, որ հասարակութեանը չը թոյլ տայ մտնել շինութեան մէջ։ Բոլոր օտար այցելողներին մերժում էին։ Ի միջի այլոց մօտեցաւ մէկ տիկին մի տղամարդու հետ. Նրանց ասացին, որ բարձրաստիճան հիւրերին են սպասում և այդ պատճառով հասարակութեան համար մուտքը փակված է։ Այցելուները ժպտալով միմեանց նայեցին և հեռացան։ Մի քանի րօպէից յետոյ, կառքով եկան ադիւտանտներ և հարցրին, արդեօք դեռ ևս այնտեղ են նրանց մեծութիւնները։ Նրանց պատասխանեցին, որ նրանք դեռ ևս չեն եկել, բայց եկաւ մէկ տիկին մի տղամարդու հետ և նրանց ներս չը թողին։ Ադիւտանտը սարսափով բացականչեց. «Թշուառական, ախր այդ նրանք էին, թագաւորը և թագուհին»։ Մաժորդոմը կամենում էր ուղղել իր սխալը, բայց արդէն ուշ էր։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յունիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 12 կ., երկրորդ 93 ր. 75 կ., երրորդ 94 ր. 50 կ., չորրորդ 94 ր. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 227 ր., երկրորդ 220 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր. 12 կ., երկրորդ 92 ր. 12 կ., երրորդ 92 ր. 12 կ., ոսկի 7 ր. $83\frac{1}{2}$ կ.։ Ռուսաց մի ռուբլ Լօնդօնի վրա արժէ 25 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ, 214 մարկ, 25 պֆ., Փարիզի վրա արժէ 264 Ֆրանկ։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

նայքին և Հայաստանի մէջ առաջին կարգի ամուր. սորա մի քանի կիրճերը, որոնք միմիայն ճանապարհներն են այս գաւառի խորքը թափանցելու, բնական մարտկոցներով պաշտպանված են, այնպէս որ 10 մարդ կարող է 100 կանոնաւոր զինուորներին հեշտութեամբ յետ մղել։ Ունի հովիտներ և տափարակներ։ Լեռները ծածկված են անտառով և պտղատու ծառերով։ Նրա լեռներում արածումեն ոչխարաց հօտեր և այծերի ընտիր տեսակ շալու անուն, որի մազը (կեաժ) վաճառահանվում է Եւրոպայում։

Բնակչաց ամենամեծ մասը նեստորական աղանդին պատկանող ասօրիներ են, ամենքն էլ հին զէնքերով զինված և կէս անկախ են։

Մարշմօնը ասօրիների հոգևոր և մարմնաւոր գլուխ, որ միանգամայն նրանց զինուորական սպարապետն է, Գօչանիս գիւղում նստում է և կառավարում է ազգը մելիքների խորհրդակցութեամբ։

Ասօրիները հարստութիւն չունեն, պարապում են խաշնարածութեամբ և երկրագործութեամբ. ապրում են սակաւապէտ. ուսում, քաղաքակրթութիւն անծանօթ է նրանց, միայն ոգևորված են կատարեալ անկախութեան գաղափարով։ Երբեմն դեսպաններ, միսիօնարներ, ընկուզի կոճեղ վաճառականներ ել ու մուտ են գործում երկրի մէջ։

Ասօրիների հայոց հետ ունեցած համակրութիւնը սկսվում է 1854-ին։ Այդ թւականին ամենայն հայոց հանգուցեալ կաթող. Ներսէս Ե-րորդը իր երկու կրօնական կոնդակներով հրահանգում է Վանայ հայոց առաջնորդ Գաբրիէլ արքեպիսկոպոսին համակրական սէր ստեղծել հայերի և ասօրիների մէջ։ Այդ հրահանգով Վանայ առաջնորդը 1856-ին Մարշմօնին հրաւիրեց Վան, ուր մեծ հանդիսով ընդունեցին նրան և առաջին տեղը տուին հայոց Ցանկօյանց եկեղեցու մէջ։ Բայց յիշեալ արժանաւոր հայրապետի մահից յետ, այդ ստեղծված համակրութիւնը առանց աճելու մնաց, որովհետև Ներսէս Ե-ը իր մտքերին յաջորդ չունեցաւ։ 1880-ին, քսան և չորս տարուց յետ նախկին համակրութիւնը կրկին յիշվեց. Մարշմօնը կրկին Վան եկաւ և 20 օր հիւրասիրվեց Ցանկօյանց եկեղեցում։ 1880 հոկ. ամսին անգլիացի միսիօնար Վ. ալ Ջուլամերկ գնաց իբրև լուսաւորութեան առաքեալ, իր հետ տանելով բազմաթիւ ասօրերէն տպեալ գրքեր, տպագրութեան մամուլ ասօրերէն տառերով և մեծածախս պատրաստութեամբ։

Բայց չը նայած միսիօնարների այսքան զոհաբերութեան և աշխատութեան, ասօրիները համակրում են միայն իրենց դարևոր դրացուն—հային. եթէ մեր կողմից մի փոքրիկ ցոյց լինէր, նրանք ի սրտէ կը ցանկային դրան. օրինակ եթէ մենք նրանց մէջ ուսումնարաններ բանալու ցանկութիւն ունենայինք, նրանք ինքեանք կօգնէին այդ գործին։ Մի խօսքով նրանց բոլոր անկախութիւնը մեզանից է, ինչ որ պակասութիւն են զգում, դրա համար մեզ են դիմում. Նրանք օտարներին չեն համակրում։

Գիւղօրէից թիւ	151
Ասօրոց թիւ	76,879
Հայերի թիւ	9884
Քրդերի թիւ	4338

8.

Նորդուզ և Շատախ

Նորդուզ և Շատախ միացեալ գաւառները հեռի են Վանէն 14—16 ժամ, դիրքը լեռնային է, անտառոտ, ջրաւէտ, ունի հովիտներ։ Տիգրիս կամ Շատ գետի ակունքը Նորդուզէն կը սկսի և Շատախու միջէն կանցնի։ Գաւառագլուխն է Շատախու-Թաղ։ Ունի ընտիր այծեր, մանաւանդ շուռ կամ ֆէլիկ անուանած տեսակը, որոնց մազերից գործում են գոյնզգոյն շալեր (նոյն այծերից ունի Ջուլամերկ)։ Նորդուզի մէջն է հռչակաւոր Հոգոց վանքը, ուր աւանդութեամբ, կարծում են, պահված է Քրիստոսի զգեստարակը։ Վանքի պարսպէն դուրս մի մատուռի մէջ կը հանգչի Արշակունեաց մեծագործ թագաւորի Տրդատայ գերեզմանը Տիգրիս գետի աջ ափին։ Այս վանքի մէջ ապաստան է գտել ս. Լուսաւորչից հալածված առասպելեալ կաղ դեւը, որ աներևոյթաբար հաւատարմութեամբ ծառայում է մինչև այսօր վանքի թոնրի մոխիրը թափելով Տիգրիսի մէջ։ Նորդուզի և Ջուլամերկի մէջ զառիկի մի մեծ հանք կայ։ Շամաղլու գիւղի մօտ մի շատ ընտիր ածխահանք կայ։

Նորդուզի մէջն է Կոզան գիւղը, որ անցեալ աշնան անձնապաշտպանութեան առաջին փորձն արին հայերը, աւազակներից 8 ը սպանելով և 30 հոգի վիրաւորելով, որոնք գիւղի ոչխարները յափշտակել էին։ Այս պարզ օրինակը կարող է ցոյց տալ, որ հայոց զինուորական հոգին մեռած, հանգած չէ, այլ մոխրի տակ թաղված կրակի է նըմանում, որին արծարծել է պէտք։ Անցեալ ձմեռ Վանայ մէջ ևս տեսայ Կոզանցոց, որոնք գաղտնաբար արշաւանաց դէմ պատրաստութիւն կամենում էին տեսնել. Նրանք նոր զէնքեր էին որոնում, բայց այդպիսի զէնքեր Վանում գտնելը հեշտ բան չէ։

Գիւղերի թիւ	115
Հայոց թիւ	26,245
Եկեղեցիք	46
Վարժարանք	7
Աշակերտք	487
Ասօրիք	447
Քրդեր	5,190

9.

Մոկս, Մամրտանք և Սպարկերտ

Այս երեք գաւառների գլխաւոր տեղին է Մոկս Վանէն 16 ժամ հեռաւորութեամբ (Սըպարկերտ կը վերաբերի Սղերտին, Բաղիշոյ կառավարութեան տակ), դիրքը առաջին կարգի ամուր, բարձրաբերձ սարերով, որոնք ծածկված են անտառով. բնակիչք ժիր և քաջառողջ են, հրաշալի են սրա լեռնային անձնան տեսարանները, անուանի է մեղր, խաղող, չամիչ, ընկոյզ և այլն։ Այստեղ գործում են ընտիր շալեղէններ շուռ այծի մազից և քէպքէպ անուանած կօշիկներ, որ հիւսում են մազից և կանեփից։ Մոկաց լեռները Տօրոս լեռների շղթան է, որ Գեաւառէն, Ջուլամերկէն, Նորդուզէն, Շատախէն անցնելով, կը ձգվի մինչև Բաղէշ։ Մոկաց մէջն է Փիւթիու, այսինքն փոթորկի, սուրբ Գէորգի վանքը իր հրաշալի աքաղաղով։ Այս վանքը յիշեցնում է ճանապարհորդին Ալպեան լեռների Ս. Բերնարդի վանքը, որ նոյնպէս շինված է լեռան ամենավտանգաւոր անցքի վրա, ուր ամառվայ տաք եղանակներին անգամ, կարող են ճանապարհորդները բուքից խեղդվել։ Սուրբ Գէորգայ վանքի մէջ մի աքաղաղ կայ, որ պատիւ ունի սուրբ կոչվելու, Սէն-Բերնարդեան շների պաշտօնի նըման մի բան է կատարում, այսինքն գուշակում է լաւ կամ վատ եղանակները։ Գուշակութիւնը կատարվում է աքաղաղի խօսելով կամ չը խօսելով։ Ճանապարհ չարունակելու համար ճանապարհորդները պարտական են աքաղաղի խօսելուն սպասել ճանապարհ ընկնելու համար։ Շրջակայ գաւառների հայերը և քրդերը հաւասարապէս յարգում և երկրպագում են սուրբին, անպակաս անելով նորա խունկ, մոմ, մատաղն ու զոհաբերութիւնները։

Այդ վանքը առաջ միշտ աճրզով էր տրվում, և մի ժամանակ Վանայ վարժարանները դրա արդիւնքովն էին կառավարվում։ Այժմ սուրբ աքաղաղի վաստակը Աղթամարայ կաթուղիկոսն է վայելում։ Սպարկերտի մէջն է ս. Խաչի հայակաց վանքը, որ այժմ քրդերի համար մարագ է դարձել։

Գիւղերի թիւ	111
Հայոց թիւ	18,575
Քրդեր	6065

(Կը շարունակուի)